ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա , 0232-3-67-91 norerznka-village@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 20

## ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածով՝ *որոշում եմ.*

2018 թվականի մարտի 2-ին ժամը 11.00-ին հրավիրել համայնքի ավագանու արտահերթ նիստ հետևյալ օրակարգով.
1. Պարտավորություն ստանձնելու մասին:
2. Նոր Երզնկա համայնքի սեփականություն հանդիսացող հողերը աճուրդ վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու մասին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20 __ թ. ____________
գ.Նոր Երզնկա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
22, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա , 0232-3-67-91 norerznka-village@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ՄԱՐՏԻ 2018թվականի N 21

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև Նոր Երզնկա համայնքի ավագանու 2017 թվականի օգոստոսի 30-ի թիվ 35 որոշման պահանջներով՝ *որոշում եմ.*

Նոր Երզնկա համայնքի սեփականություն հանդիսացող 670 քմ. հասարակական նշանակության շինությունը և դրա սպասարկման համար առանձնացված համայնքային սեփականություն հանդիսացող 018-023 կադաստրային ծածկագրով 0,410 հա բնակավայրերի նշանակության հողամասը (սեփականության վկայական 2348204) անհատույց, անորոշ ժամանակով օգտագործման իրավունքով տրամադրել Նոր Երզնկայի <<Նոր Երզնկայի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ին նախադպրոցական կրթություն կազմակերպելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20 __ թ. ____________
գ.Նոր Երզնկա